«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ

ԹԵՄԱ Հայոց լեզվի անաղարտության պահպանումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին

ԱՌԱՐԿԱՆ Հայոց լեզու և հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Արմիկ Զաքարյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Երասխահունի Մ. Գևորգյանի անվան միջն. դպրոց

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**

ՆՊԱՏԱԿԸ **3**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ **3**

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ. 4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 5

Փորձարարական դաս 1 5

Փորձարարական դաս 2 9

Փորձարարական դաս 3 12

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16

Փորձնական դասի պլան 1 16

Փորձարարական դասի պլան 2 17

Փորձնական դասի պլան 3 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Որպեսզի հաղթենք թշնամուն, նախ պիտի սկսենք լեզվից>>:

Արդի ժամանակներումշատ կարևոր է հայոց լեզվի անաղարտության խնդիրը: Աշակերտները շատ են շփվում համացանցով, ավելի շատ օգտվում են օտար լեզուներից, քան հայերենից: Հայոց լեզուն մղվել է 2-րդական պլան:

ՆՊԱՏԱԿԸ

- Հայոց լեզվի և գրականության դասերին ավելի շատ ուշադրություն դարձնել հայոց լեզվի մաքրությանը եւ անաղարտությանը:
- Հետևել, որ աշակերտները խոսեն գրական հայերենով:
- Համացանցում տեքստային աշխատանքները գրել հայերենով:
- Իմանալ օգտագործվող օտար բառերի գրական համարժեքները:
- Հայերեն համարժեքները կիրառել գրավոր և բանավոր խոսքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, չափորոշիչների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելիս գնահատումը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց: Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և նրանց մոտ ձևավորվող արժեքային համակարգի

բարելավման նպատակով որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում ուսուցման կազմակերպումը, ուղղորդումը և խորհրդատվությունը, կրթական հնարավորությունների բացահայտումը, սովորողների ձեռքբերումների և իմացության աստիճանի ամրագրումն ու վկայագրումը: Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման ու կատարելագործման նպատակով օգտագործվում են **միավորային** (քանակական) և R**ուսուցանող** (ձևավորող) գնահատման արդյունքները:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները:

Արժևորումն աշխատանքի, արդյունքի, երևույթի արժեքավորության կամ արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե սովորողներն ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց ուսումնական նպատակներին:

Գնահատում տերմինը մինչ այժմ մենք հիմնականում օգտագործել ենք չափման իմաստով:

https://elearning.iedf.am/course/view.php?id=584

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ **հայտորոշմամբ**: Հայտորոշման դերը բարձր է ուսումնական աշխատանքում, եթե որակյալ արդյունք է ակնկալվում: Հայտորոշման կարևորությունը մարդիկ հաճախ տեսնում և զգում են՝ հատկապես բժշկության ասպարեզում: Բժշկության մեջ բժշկի գլխավոր խնդիրը հիվանդության ճիշտ ախտորոշումն է, որից հետո միայն որոշվում է բուժման ճիշտ եղանակը: Ներկա պայմաններում թերևս առավել դժվար է հիվանդության ճիշտ ախտորոշումը, քան բուժումը:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման գործում սովորողի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները: Կախված այն բանից, թե ինչը ինչ ծավալով և խորությամբ է անհրաժեշտ հայտորոշել, կարելի է օգտագործել տարբեր միջոցներ: Հայտորոշման նպատակով կարելի է օգտագործել նաև բանավոր66 հարցումներ:

Ուսուցանող գնահատման առանձնահատուկ տեսակ է հայտորոշիչ թեստը: Դրա նպատակն է որոշել, թե արդյոք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը:

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ.

- կարճ ժամանակի համար է, արագ է,
- որոշակի է,
- արագ է ստուգվում և արժևորվում,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը,
- սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է,
- արդյունքները հեշտ վերլուծելի են,
- արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ կարող ենք որոշել սովորողների հետ հետագա անելիքները:

Հայտորոշիչ թեստն ստուգելիս կարելի է օգտագործել միավորային գնահատումներ՝ արդյունքների հեշտ և ակնառու վերլուծությունների ու մեկնաբանությունների նպատակով: Դրա համար կազմվում է առաջադրանքների գնահատման պարզ ու դյուրըմբռնելի սխեմա:

/elearning.iedf.am/mod/page/view.php?id=30639

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Այս հետազոտությունն անցկացրել եմ Կոտայքի մարզի Քաղսիի միջնակարգ դպրոցում 6-րդ, 10-րդ,11-րդ դասարաններում:

Փորձարարական դաս 1

Սայաթ - Նովա, <<Թամամ աշխար պտուտ եկա>> տաղը

Առարկա՝ Հայ գրականություն	Ամսաթիվ	12.12.2021	Կիսամյակ I	Դասարան	10-րդ
Խմբի բացվածք՝	Աղջիկ՝ 7 Տղա՝7				

Թեմա՝	Սայաթ -Նովա, <<Թամամ աշխար պտուտ եկա>> տաղը
Դասի տևողությունը՝	45 րոպե
Դասի տիպը՝	Խառը
Օգտագործվող նյութեր՝	Համակարգիչ, պրոյեկտոր, հեռախոսներ, դասագիրք բառարան,տաղի տպագիր օրինակներ,տաղի առանձին քառատողի թերթեր https://www.youtube.com/watch?v=Eg8GFhRYxhA
Դասի նպատակը՝	• Ծանոթացնել և ամրապնդել աշակերտների գիտելիքները, • Խթանել ուրիշների հետ համագործակցելու և աշխատելու, ինչպես նաև սեփական գաղափարները արտահայտելու և գնահատելու կարողությունները, • Զարգացնել ուսումնասիրելու, վերլուծելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ կատարելու կարողությունները, • Իմանալ տաղի բոնդակությունը և մեկնաբանել, • Վերարտադրել տաղի բովանդակությունը գրական արևելահայերենով, • Մեկնաբանել,պաշտպանել սեփական կարծիքը:
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի է ունեցել	
Վերջնարդյունքները	• Կարողանա բացատրել,կարդել և հասկանալ տաղը, • Կարողանալ աշխատել բառարանով, • Կարողանա տաղի բովանդակությունը վերարտադրել գրական արևելահայերենով, • Կարողանա մեկնաբանել,պաշտպանել սեփական կարծիքը: • Կարողանա ստեղծագործական աշխատանք

Գործողություններ (ժամ/տևողություն)	*Ուսումնական գործունեություն Աշակերտներ*	*Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ* *Ուսուցիչ*
	Նախապատրաստվում են դասին:	*Ներկա/բացակա, նախապատրաստել դասին:*
Տնային աշխատանքի քննարկում (5 ր)	*Աշակերտները ներկայացնելու են իրենց տնային աշխատանքը, տալու են անհասկանալի հարցերը, մեկնաբանելու են իրենց գրածը: Նախապես երեխաներին հանձնարարված է եղել սովորել տաղը կարդալ:*	*Տնային աշխատանքը ստուգել քննարկման միջոցով, բացահայտել և ուղղել թերացումները, բացատրել անհասկանալի բառերը : Տալ հարցեր աշխատանքի վերաբերյալ, ներգրավել քննարկման մեջ հնարավորինս բոլոր աշակերտներին:*
Խթանման փուլ (7 րոպե)	*Այս փուլում յուրաքանչյուր միտք, թեկուզ անվստահ արտահայտված, խրախուսվում է :* Կիրառել 5-րոպեանոց շարադրանք կարդացածի և զգացածի վերաբերյալ:	Մտագրոհ մեթոդի կիրառմամբ վեր հանել սովորողների ունեցած գիտելիքները թեմայի վերաբերյալ՝ օգտագործելով հարցադրումներ:
Իմաստի ընկալում (նոր դասի ներկայացում, 20ր)	*Աշակերտները լսում են, կատարում են նշումներ: Այս փուլում կիրառվում է << Եռամաս օրագիր>> մեթոդը:* *Ուսուցչի օգնությամբ ամփոփում են հիմնական մտքերը կիրառելով համագործակցային մեթոդները:*	*Ներածական խոսք, որի ժամանակ ներկայացվում է դասի նպատակը, կապ է ստեղծվում անցած նյութի հետ, անդրադարձ է կատարվում հիմնական գաղափարներին : Բացահայտել և լրացնել թերացումները:*

Կշռադատման փուլ Թեստային առաջադրանք (7րոպե)	Հայտորոշիչ թեստ	*Ամփոփել հիմնական մտքերը: Բացահայտել և լրացնել թերացում-ները:*

Գնահատում (3 ր)		Յուքանրյուր աշակերտ գնահատ-վում՝ ըստ **հայտորոշիչ թեստից**-ից և 5-րեպանոց շարադրանքից հավաքած միավորների, գնահատվում են նաև դասի ամբողջ ընթացքում աչքի ընկած աշակերտները:
Ամփոփում (3 ր)	*Աշակերտները նշում են տնային հանձնարարությունները :*	Ինչ սովորեցի տվյալ դասինև ինչ նպատակ է հետապնդում Սայաթ - Նովայի տաղի ուսումնասի-ությունը:

Հատկորոշիչ թեստ

Սայաթ - Նովա

1.Սայաթ - Նովայի իսկական անուն - ազգանունն է՝

- Եղիշե Սողոմոնյան
- Ալեքսանդր Թևոսյան
- Հարություն Սայադյան
- Ալեքսանդր Թումանյան

2.Ո՞րտեղ է ծնվել Սայաթ-Նովան։

- Թիֆլիս
- Կարս
- Կարս
- Մակու

3.Համապատասխանեցնել տրված բառերի հայերեն համարժեքները՝

- խամ, թանկարժեք քար, գոհար
- թամամոսկի
- նաղաշամբողջ
- փնջաննկարիչ
- օսկիհասարակ
- ջավահիր ըմպանակ

4.Լրացնել բաց թողնված բառը։

Սայաթ-Նովայի թուրքերեն և հայերեն երգերը, ինչպես հեղինակն ինքն է գործածել, խաղերը պահպանվել են իր իսկ ձեռքով գրված մատյանում, որը հայտնի է<<……>> անունով։

Փորձարարական դաս 2

Հրանտ Մաթևոսյանի << Հացը>> պատմվածքը

Առարկա՝ Մայրենի	Ամսաթիվ	12,11,2021	Կիսամյակ I	Դասարան	VI
Խմբի բացվածք՝	Աղջիկ՝ 14 Տղա՝21				
Թեմա՝	Հրանտ Մաթևոսյանի << Հացը>> պատմվածքը				
Դասի տևողությունը՝	45 րոպե				
Դասի տիպը՝	Խառը				

Օգտագործվող նյութեր՝	Համակարգիչ, պրոյեկտոր, սմարթֆոններ, դասագիրք, դիմանկար, բառարան 
Դասի նպատակը՝	• Ծանոթացնել և ամրապնդել աշակերտների գիտելիքները Հրանտ Մաթևոսյանի կյանքի և գործի վերաբերյալ, • Զարգացնել ընթերցողական կարողությունները, • Զարգացնել կապակցված խոսքը, • Զարգացնել երևակայական մտածողությունը, • Խթանել ուրիշների հետ համագործակցելու և աշխատելու, ինչպես նաև սեփական գաղափարները արտահայտելու և գնահատելու կարողությունները, • Զարգացնել ուսումնասիրելու, վերլուծելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ կատարելու կարողությունները:
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի է ունեցել	
Վերջնարդյունքները	• Իմանա՝ Հրանտ Մաթևոսյանը կյանքն և ստեղծագործությունները, • Իմանա պատմվածքի առանձնահատկությունները, • Իմանա արտահայտիչ ընթերցանության կանոնները: Կարողանա՝ • Կարդալ և հասկանալ պատմվածքը,գաղափարական բովանդակությունը, • Մեկնաբանել, վերլուծել կերպարները, • Կատարել վերուծական աշխատանք, • Կարողանա զարգացնել քննադատական մտածողությունը, • Ուրիշների հետ աշխատել, համագործակցել, դասընկերների և սեփական կարողությունները գնահատել և վերլուծել:

Գործողություններ (ժամ/տևողություն)	*Ուսումնական գործունեություն Աշակերտներ*	*Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ* *Ուսուցիչ*
	Նախապատրաստվում են դասին:	*Ներկա/բացակա, նախապատրաստել դասին:*
Տնային աշխատանքի քննարկում **(5 ր)**	*Աշակերտները ներկայացնելու են իրենց տնային աշխատանքը, տալու են անհասկանալի հարցերը, մեկնաբանելու են իրենց գրածը:* *Նախապես երեխաներին հանձնարարված է եղել սովորել Հրանտ Մաթևոսյանի կենսագրությունը :*	*Տնային աշխատանքը ստուգել քննարկման միջոցով, բացահայտել և ուղղել թերացումները, բացատրել անհասկանալի կետերը:* *Տալ հարցեր աշխատանքի վերաբերյալ, ներգրավել քննարկման մեջ հնարավորինս բոլոր աշակերտներին:*
Խթանման փուլ **(7 րոպե)**	Կիրառել <<5-րոպեանոց>> շարադրանք մեթոդը։Տալ բանալի բառեր։Դիտել ՏՀՏ –ով պատրաստված տեսանյութ https://edpuzzle.com/media/6180f2b8e0d119417745656a *Այս փուլում յուրաքանչյուր միտք, թեկուզ անվստահ արտահայտված, խրախուսվում է :*	Մտագրոհ մեթոդի կիրառմամբ վեր հանել սովորողների ունեցած գիտելիքները թեմայի վերաբերյալ՝ օգտագործելով հետևյալ հարցադրումները՝ ով է պատմվածքի գլխավոր հերոսը։ Ինչ կարծիք ունեք գլխավոր հերոսի մասին։

Իմաստի ընկալման փուլ **(նոր դասի ներկայացում, 20ր)**	*Աշակերտները լսում են, կատարում են նշումներ: Դիտում են հետևյալ Ուսուցչի օգնությամբ մեկնաբանում են և վերլուծում տեսանյութը: Կիրառել ընթերցանության <<Կանխագուշակման աղյուսակ>> մեթոդը:*	Ներածական խոսք, որի ժամանակ ներկայացվում է դասի նպատակը, կապ է ստեղծվում անցած նյութի հետ, անդրադարձ է կատարվում հիմնական գաղափարներին : Բացահայտել և լրացնել թերացումները:

Կշռադատման փուլ **(7-րոպե)**	Կիրառել <<Քառաբաժան>> մեթոդը	*Ամփոփել հիմնական մտքերը: Բացահայտել և լրացնել թերացումները: Մտքերի փոխանակում և քննարկում:*
Գնահատում **(3 ր)**		Յուրաքանչյուր աշակերտ գնահատվում է ըստ հավաքած միավորների, գնահատվում են նաև դասի ամբողջ ընթացքում աչքի ընկած աշակերտները:
Ամփոփում **(3 ր)**	*Աշակերտները նշում են տնային հանձնարարությունները :*	Պարզաբանել տնային աշխատանքը, անհասկանալի հարցերը մեկնաբանել:

Փորձարարական դաս 3

Դասի պլան

Դասարան - 11-րդ

Աշակերտների քանակը - 20 աշակերտ (7-տղա,13-աղջիկ)

Առարկա - Հայ գրականություն

Դասի տևեղությունը - 45րոպե

Դասի տիպը - Խառը դաս

Թեման - Հովհ. Թումանյանի <<Անուշ>> պոեմի կերպարները

Նպատակը՝

Ծանոթացնել <<Անուշ>> պոեմին:

Ծանոթացնել գրական կերպարի վերլուծության սկզբունքներին:

Ծանոթացնել գրական երկից քաղված փաստերի օգնությամբ հերոսին բնութագրելու առանձնահատկություններին:

Անհրաժեշտ միջոցներ

Դիմանկար, տեսանյութ, դասագիրք, ՏՀՏ-ով պատրաստված տեսանյութ, <<Անուշ>> կինոնկարի ժապավեն, պոեմի նկարազարդումներ:

https://www.youtube.com/watch?v=GhbutfkiwN8



Վերջնարդյունք

Թեման ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է.

Իմանա Գրական կերպարի վերլուծության սկզբունքները:

Գրական երկից քաղված փաստերի օգնությամբ հերոսին բնութագրելու առանձնահատկությունները:

Կկարողանա Գրական երկից գտնել տվյալ հերոսի արտաքինն ու բնավորությունը ներկայացնող հատվածներ:

Ընկալել հերոսի ապրումները, հասկանալ նրան։

Բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել և բնութագրել տվյալ հերոսին։

Վարժվել համագործակցության և հաղորդակցման։

Դրսևորել հանդուրժողականություն և փոխըմբռնում դասընկերների հակադիր կարծիքների դեպքում։

Դասի ընթացքը Կիրառվում է **ԽԻԿ** համակարգը։

Խթանման փուլ 7-10 րոպե

Դասը կարելի է սկսել զրույցի միջոցով։ Կիրառվում է մտագրոհ. գրատախտակին գծված շրջանակի մեջ գրվում է **կերպար** բառը։Ուսուցչի օգնությամբ լսել Արմեն Տիգրանյանի <<Անուշ>> օպերայի նախերգանքը և հետևել պոեմի տպագիր նախերգանքին։ https://edpuzzle.com/media/61810e11dd439f416a371ebc Ավարտից հետո հարց ուղղել. <<Ում էր ներկայացնում հեղինակն այս նախերգանքում և ինչու>>։ Լսել քննարկվող կարծիքները։

Իմաստի ընկալման փուլ- 15-20րոպե

Սովորողներին նախօրոք հանձնարարություն տալ պոեմից գտնել Անուշին, Սարոյին, Մոսիյին, Անուշի և Սարոյի մայրերին, հեղինակին ներկայացնող հատվածները։ Կիրառել խմբային հետազոտության մեթոդը։

Հանձնարարել

- Հերոսի արտաքին նկարագիրը ըստ պոեմի, եթե պոեմում բացակայում են տվյալ հերոսի արտաքին նկարագրությունները, պիտի առաջնորդվել երևակայությամբ, հերոսի արտաքինն իմ պատկերացմամբ։
- Հերոսի բնավորությունն ըստ պոեմի, հիմնականում շեշտադրվում են սիրելու, ներելու, վրեժխնդիր լինելու, սիրո համար պայքարելու, ադաթի գերին լինելու սովորույթները մարդուց վեր դասելու մեծահոգության, փոքրոգության դրսևորելու մասին։
- Խմբային աշխատանքում կիրառում ենք համագործակցության մեթոդը։

Միջոց 3, Ինտերակտիվ մեթոդ

Կշռադատման փուլ 10-15 րոպե

Կշռադատման փուլում աշակերտները իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին: Ինքնուրույն ստեղծագործական աշխատանք, սա տրվում է սովորողների ստեղծագործական կարողությունների և խոսքի զարգացման համար:

- Գրել նամակ Անուշին կամ Սարոյին:
- Գրել նամակ Հովհ. Թումանյանին:
- Մշակել հարցազրույց Հովհ. Թումանյանի հետ:
- Գրել կարծիք պոեմի սիրած հերոսի մասին:
- Շարադրանք <<Եթե Անուշն ապրեր մեր օրերում>> վերնագրով:
- Առաջադրանքները կարող են տրվել որպես տնային աշխատանք:

Գնահատում

Գնահատվող աշխ. տեսակը	Գնահատման հարցեր	միավոր
Գնահատել ստեղծական մոտեցումները	Սովորողը դրսևորել է ստեղծագործական մոտեցում	4
	Քիչ է ստեղծագործական միտքը:	2
Գնահատել պատրաստի աշխատանքի որակը	Աշխատանքն ունի ոչ մեծ շեղում; Աշխատանքի որակի մակարդակը բարձր է:	3 4

	Աշխատանքը գնահատվում է :	10

Գնահատում եմ բոլորին:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Փորձնական դասի պլան 1

ԱՌԱՐԿԱ - Հայ գրականություն
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ - 45 րոպե
ԹԵՄԱ - Սայաթ-Նովա, <<Թամամ աշխարհ պտուտ եկա>> տաղը
Թեման նախատեսված է դասավանդել 11-րդ դասարանում:
Թեման դասավանդելիս հանդիպել եմ դժվարությունների: Չի բավականացրել դասաժամը, որովհետև աշակերտները ունեին շատ հարցեր, աշխատել եմ պատասխանել աշակերտների բոլոր հարցերին՝ չանտեսելով ոչ մի աշակերտի: Հաջողվեց ներկայացնել տաղի բովանդակությունն ու մեկնաբանությունը:

Դժվարանում էին տաղի բովանդակությունը վերարտադրել գրական արևելահայերենով: Դասի սկզբում ավելի շատ ես էի խոսում, բացատրում, մեկնաբանում:

Խթանում փուլում կիրառել եմ << Հինգ րոպեանոց շարադրանք>> մեթոդը: Սայաթ-Նովայի երգերի մեղեդու տակ աշակերտները փորձեցին շարադրել իրենց մտքերն ու զգացածը:

Իմաստավորում փուլում կիրառել եմ ընթերցանության <<Կանխագուշակման աղյուսակ>> մեթոդը: Աշակերտներին բաժանել եմ <<Կանխագուշակման աղյուսակի>> թղթիկները, բառարաններ: Առաջին սյունակում գրում են խաղի տները, երկրորդում գրում են գրական արևելահայերենով, իսկ երրորդում՝մեկնաբանություններ: Աշակերտները աշխատում են ինքնուրույն: Ժամանակը լրանալուց հետո խմբերը բաժանվում խմբերի ըստ քառատողերի: Առաջացած դժվարությունները հետագայում հարթվեցին իմ մեկնաբանություններից հետո: Խմբերը ստեղծեցին միասնական մի տարբերակ:

Կշռադատման փուլում սովորողները գրառումներ են անում

<<Մեկնաբանություններ >> սյունակում, վերլուծում են տվյալ քառատողը, կարողանում են արտահայտել իրենց կարծիքը: Ես պարտավոր եմ խրախուսել տարակարծությունները և սեփական կարծիքը պաշտպանելու միտումը:

Անդրադարձի ժամանակ պարզեցինք, թե ինչ սովորեցին տվյալ դասին, ինչ նոր բառեր սովորեցին, որն է դրանց հայերեն համարժեքը, ինչ նպատակ է հետապնդում Սայաթ-Նովայի տաղի ուսումնասիրությունը: Գնահատվել են առավել աչքի ընկնող աշակերտները և լավագույն ստեղծագործող աշակերտները:

Փորձարարական դասի պլան 2

Վերլուծություն

Դասարան-6-րդ

Թեման -Հրանտ Մաթևոսյանի <<Հացը>> պատմվածքը

Թեման դասավանդելիս հանդիպել եմ մի քանի դժվարությունների և ունեցել եմ թերություններ: Այն է՝ դասաժամը չբավականացնելը, աշակերտները մեթոդների և աշխատանքի հետ կապված շատ հարցեր ունեին, որոնց տալիս էի մանրամասն բացատրություն: Նրանք ուզում էին ինքնուրույն հասկանալ դասի նպատակները: Չնայած այս թերություններին՝ նրանք ոգևորված էին: Նպատակ էի դրել հարստացնել երեխաների բառապաշարը, զարգացնել ընթերցողական կարողությունները, պատմվածքի երկիմաստի ընկալումը, զարգացնել կապակցված խոսքը, քննադատական մտածողությունը, զարկ տալ երևակայությանը: Դասին կիրառել եմ << Հինգ րոպեանոց շարադրանք>>, <<Կանխագուշակման աղյուսակ>>, <<Քառաբաժան>> մեթոդները:

Խթանման փուլում հանձնարարվում է << Հինգ բոպեանոց շարադրանք>> մեթոդը: Մի փոքր շարադրանքից հետո գրում ենք հենակետային բառերը, որոնք կօգնեն շարադրանք գրելիս: Արդյունքում ստացվում է մի փոքր պատմություն:

Իմաստի փուլում կիրառում եմ <<Կանխագուշակման աղյուսակ>> մեթոդը: Ինչ է լինելու, ինչ փաստեր կան, ինչ եղավ: Դասը բաժանվում է հատվածների,որի հիման վրա էլ լրացվում է աղյուսակը:

Կշռադատման փուլում կիրառում եմ << Քառաբաժան >> մեթոդը:Առաջին հատվածում՝

- Ինչ պատկերներ են տեսնում պատմվածը ընթերցելիս:
- Ինչ ձայներ են լսում:
- Ինչ էի զգում պատմվածքը ընթերցելիս:
- Կարծիք պատմվածքի մասին և խոսեն գրական հայերենով:

Աշխատանքից հետո բուռն քննարկումներ եղան: Դժվարությամբ, սակայն հասա նպատակիս: Առավել ուշադրություն եմ դարձրել որոշ բառերի հայերեն համերժեքներին: Հետևել, որ աշակերտներն օգտագործեն այդ բառերը իրենց գրավոր ու բանավոր խոսքում:

Փորձնական դասի պլան 3

Վերլուծություն

Դասարան - 11-րդ

Առարկան - Հայ գրականություն

Թեման - Հովհաննես Թումանյան,<< Անուշ>>պոեմը.Կերպարները

Թեման դասավանդելիս ունեցել եմ դժվարություններ՝ կապված դասաժամի չբավականացնելու, աշակերտների շատ հարցադրումների և որոշ մեթոդների չհասկանալու հետ:

Նպատակ էի դրել ծանոթացնել գրական կերպարի վերլուծության սկզբունքներին, գրական երկից քաղված փաստերի օգնությամբ հերոսին բնութագրելու առանձնահատկություններին: Վերջնարդյունքում աշակերտները կիմանան գրական երկից գտնել տվյալ հերոսի արտաքինն ու բնավորությունը ներկայացնող հատվածները ,ընկալել և հասկանալ նրան , բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել և բնութագրել հերոսին ,ըմբռնել մարդու հոգեբանությունը, վարժվել համագործակցությանը և հաղորդակցմանը, դրսևորել հանդուրժողականություն և փոխըմբռնում դասընկերների հակադիր կարծիքների դեպքում:

Կիրառել եմ մտագրոհ, խմբային հետազոտություն,տեքստային, ինքնուրույն ստեղծագոր-ծական աշխատանքներ: Դասի ընթացքում կիրառել եմ ԽԻԿ համակարգ: Այս համակարգի ընթացքում աշակերտները հասնում են նրան, որ կարողանում են ստեղծագործել, նկարագրել, երևակայել: Նման համակարգի կիրառումը զարգացնում է աշակերտների ստեղծագործական

կարողությունները, խոսքը, բառապաշարը, գրական հայերենը: Բոլոր աշակերտները գնահատվում են ըստ գնահատման սանդղակի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Փորձարարական դասեր եմ անցկացրել 10-րդ, 6-րդ, 11-րդ դասարաններում: Այս դասերի վարման ընթացքում եզրակացրել, որ արդի դարաշրջանում, որտեղ մեծ քայլերով առաջ է գնում գիտությունը, մենք՝ ուսուցիչներս, չենք կարող չշարժվել նրա հետևից: Ուսուցման ավանդական մեթոդները պիտի փոխարինվեն նորերով: Այժմ արդիական են դառնում ՏՀՏ գործիքների միջոցով կազմակերպված դասերը: Նմանատիպ դասերը հետաքրքրում են աշակերտներին, շահագրգռում: Ավելի արդյունավետ են և հետաքրքիր: Ընդլայնվում են աշակերտների հետաքրքրությունների շրջանակը, նրանց ներգրավվածությունը դասապրոցեսին: Նմանատիպ դասերը զարգացնում են աշակերտների քննադատական մտածողությունը, ստեղծագործական կարողությունները, գրական հայերենով խոսելը, լեզվի անաղարտության պահպանումը, որը իմ փորձարարական դասերի հիմնական նպատակն է: Այս մեթոդներով աշխատելը հեշտացնում է մեր աշխատանքը: Նմանատիպ դասեր կազմակերպելու համար մեզ հարկավոր է տեխնիկապես հարուստ համակարգչային դասասենյակներ, որը ևս խնդիր է որոշ դպրոցներում: Մեր նպատակն է բարձրացնել ուսման որակը, որն էլ տանում է մեր վերապատրաստումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արնաուդյան Ա, և ուրիշներ, <<Մասնագիտական զարգացման ձեռնարկ>>: Unisef, 2004:

2. Հովհաննիսյան Ա և ուրիշներ, <<Համագործակցայինուսուցում>>, Երևան, <<Անտարես>> 2006:

3. Գյուլբուդաղյան Ս, <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Երևան, ԵՀՀ, 1978

4. Սարուխանյան Ս և ուրիշներ, <<Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ>>, Վանաձոր, ԿԱԻ 2008:

5. Վիրաբյան Ն. Մարգարյան Լ, <<Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ժողովածու>>, Երևան, <<Մարմար>> 2010:

https://elearning.iedf.am